



գին, բուն ոճրագործները գծապաշտին քրքրեցնելու մէջ կը հեղինակ մարգարէութիւնը . . .

Հօս է գաղտնիքը, զոր ո՛չ մէկու տրուած է թափանցել, հօս է հանելուկը, զոր անխնայ- նականներու երկցազոյնն ալ թերեւս վարանի լուծելու : Ուստի, այս մասին ինչ որ ալ ըսենք, իրականութիւնը միշտ քոյի տակ կը մնայ, այդ արդիւնաւոր պատճառն էր մեզի, միջուկը անխնայ- իանականներուն ըսելով միայն կրնանք ելնել կնճիւղին մէջէն . ո՞վ գիտէ ի՞նչ անըմբռնելի և անթափանցելի խորհրդով է որ անխնայանական- ները սովորաբար հրապարակ կուզան իբրև խան- դարուած մաքրի ու հիւանդոտ երևակայութեան տէր ոճրագործներ : մինչդեռ ձեռքակալուած- ներուն մեծ մասը ցոյց տուած է մուխ նկա- րագիր, կամքի ու մտքի կտրով ու վառնող ար- համարհանք, ինչ որ հեռի է յիմարութիւն նը- շանակելէ :

Հետեւաբար, անհմաստ չլինար ըլլալ իրա- րանցումը Գանձիճներուն, որոնք երկրացունցի վայրէ մը մաշակուած փախչողներու ակամայ ար- տայայտութիւնն ունին :

Սակայն, Հայ մը պիտի հարցնէ ինքնին, տեսնելով դանիճներուն այս տազնադայրկ կացութիւնը . ի՞նչ կ'ընէր այդ անխիղճ Եւրո- պան, երբ ապին, Մեծ-Մարդասպանին գծո- խային արարը կը կատարուէր Տօրոսի գագաթէն մինչև Այրարատի ստորոտը . երեք հարիւր հա- ղարներու անմեղ մարդազոհին հոտը չը հասա՞ւ արդեօք անոր պագչոտ ունըներուն :

Ի՞նչ կ'ընէր այդ վառաշատ Եւրոպան, երբ Վոսիորի Առաքելատան լիտի ցաղազանդէսնե- րուն մէջ կը կաքաւէր, մարդկեղէն մաի ու արիւնի կերտխուսն մէջ թաղուած, արիւնհզակ ու ցոփ Գահճապետի մը գրկին մէջ խնձելի քունը կը քնանար . բերքաւոր զոհերուն ազեկտուր աղա- ղակը չը հասա՞ւ արդեօք իր քերթու ականդ- ներուն :

Ու հիմայ, այդ անպատկառ Եւրոպան, որ ազնիւ ազգի մ'արգար ու անմեղ բազմանքնե- րուն չիրմին վրայ տնկեց իր շահամարութեան կարմիր կոթողը . նուաստ կիրքերէ կուրցած այդ Եւրոպան, որ իր ազդութեան ու պառա- կաւմեան հետեւանքով իր կենսական շահերը վրայ առաւ ու սակայն տալու վրայ է . սակի Հորթին երկրպագու այդ Եւրոպան, ելեր այսօր կուրջ կ'ողբայ, վայնասուններովը կը լեցնէ Արեւմուտքն և Արեւելքը, Հիւսիսն ու Հարաւը, որովհետեւ ա՛լ կ'զգայ թէ՛ վտանգը զուրը հասած է . և արդէն հիմա կ'ընէ կը թուի ըսել ճարճաուսմեները խարխուլ միջնաբերդին, որուն հիմքը գրած է քաղաքալիթութեան սուրը անունն աղարատը նրբին բարբարոսու- թիւնը, այն է դարավերջի զիւանագիտութիւնը :

Է՛հ ուրիմն . հաւատա՞նք հիմայ թէ ա՛յս- քան անմեղ ու այսքան նւթապաշտ Եւրոպա մը կարենայ թումբ զնեւ հոսանքին դէմ որ ամհի ու փրփուռ, կը սուրայ, կը հեղեղէ ու կ'երևի թէ պիտի ողջէ տիեզերքի Արքունիքները . . . : Միամիտ ըլլալ պէտք է աղօտ հաւատք մ'ու- նենալու համար թէ՛ ճնշել ու բռնի միջոցներով հնարաւոր ըլլայ կասեցնել անխնայանականներուն արշաւանքը, որ, դժբաղդալար, չը նմանիր ո՛չ Աստիկայի ո՛չ Լէնկիթիւնի, ո՛չ ձինկիդիանի և ո՛չ Պոնապոլիի ժամանակաւոր ու վազանցիկ խաղաղքին : Գաղափարին արշաւանքն է ասի, որ կեանքի գերագոյն նպատակին իրագործումը, մարդկութեան սրբաշան իրաւունքներուն ու շահերուն ստացումը կ'ապահովէ, կ'ազդէ ան- նխնայանականները, և բազմապատկուած ուժերով կը նետուին մահուան դէմ . հետեւաբար, չզիտի կրնանք մեր ակամայ լայր կամ ծիծալը զպել երբ վաղը լսենք կամ կարգանք թէ՛ Գահճիճ-

ները կանաչ սեղանին վրայ պիտի բերեն զնեն այս հարցը . թէ՛ ալեւոր դիւանագէտներ՝ գի- շերներ պիտի լուսնեն . թէ՛ ուստիկանութեան Արդունք պիտի խորամխին ամենամութ խաւ- բուն մէջ ու պիտի լրտեսեն կասկածելի շար- ժումները . թէ՛ բանտերը նեղ պիտի դան . թէ՛ ամեն տեղ կառավարներու պիտի կանգնին . թէ՛ վերջապէս՝ բիրտ ուժը պիտի թաղաւորէ, ձեր- բակալելու, բանտարկելու, գատապարտելու, բը- նաջինջ ընելու անխնայանականներու ցեղը . . . :

Խ.

### ՀԱՅՐԵՆԵԱՑ ՍԵՐԸ

Հայրենիք չ'ապրիր առանց միութեան, Զի է անհոգի մարմին՝ անկենդան :

Մուսլ. Նանի

Անա՛ ճշմարտութիւն մը . միութիւնն է որ կը պահ- պանէ հայրենիքը, կենսեք կուտայ հայրենիքին, ու հայ- րենիքի տեսականութիւնը կ'ապահովէ . գաղափարաց միութիւնն է որ ծնունդ կուտայ բարեկեցութեան ու երջանկութեան, ընդհակառակն, անմիութենէն առաջ կուգայ փճացում ու թշուառութիւն :

Մէն մի անձանտ պարտի ստանձին սիրել իր հայրե- նիքը, ամէն մէկուն նուիրական պարտականութիւնը պէտք է ըլլայ ծառայել հայրենիքին անձնուիրաբար :

Երբ որ այս առանձնական սէրը համաձուլենք, մի- ութիւնը կազմած կ'ըլլանք . ու այսպէս, հայրենիքը կ'ա- զատի :

Հայրենասէր մը միշտ գո՛ն կ'ըլլայ ի՞նչ կերպով ալ ապրի, ու զուարթ՝ ի՞նչ կերպով ալ մեռնի : Այո՛, մի- ութիւնն է որ կ'ապրեցնէ ազգ մը : Ազգը քանի՛ ապրի, քանի՛ քան կը տեսնուի իշխանութիւնը, ազգ մը կ'ունայ կազ- մով իշխանութիւն, բայց իշխանութիւն մը չը կրնար կազմուլ ազգ մը . . . միութեամբ յատկացումներն կ'ըլ- լայ, իսկ պատակուումով՝ առձեռն եղածներն ալ կը կոր- ստին, քան մը որ արդէնք է տգիտութեան :

Ամին սև . հալածանք ու ամեն փորձանք, պատրանքի գիրքը քնացող ազգի մը՝ համար միշտ բաց են . ստեղծ- ծագործութեան սկիզբէն մինչև ցայսօր ամենազօրաւոր ու անթիւ ապացոյցներով հաստատուած է թէ՛ միութեան ճամբէն չը շեղողները յաղթող, իսկ տգէտները պարտալ կղած են, են ու պիտի ըլլան :

Բնական է թէ՛ վարդապետական ու խրատական քարոզ մը տուած ըլլալու համար չէ՛ որ այս սողերը կը շարենք այլ, տեսնելով ներկայ սերունդին մէջ անխոն- տովանելի թեթեւութիւններ, որոնք հայութեան մեծութեա- նը պատուարներ ըլլալու քնով չունին կրթեք, կը փախազինք որ եղիպտական ազատ գաղթավայրին քա- ռուելութիւններէն օգտուիլ պիտանայ մեր հայ հասարա- կութիւնը, ջանալով համբարախութեան մէջ զնել պա- ռակտուսի նշաններ ցոյց տուող ընկերութիւնները , որոնք այնքան օգտակար են ու անհրաժեշտ, Հայ գաղ- թականութեան բարձր ու պատուաւոր դերք մ'ընծա- յելու համար այս միջազգային երկրին մէջ :

Լ. ՇԻՇՄԱՆԵԱՆ

### Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի Ն

Տեղւոյ Ազգ. վարժարանի երկուսու աշա- կերտներուն բարի նախանձն արթնցնելու և յառաջողէմներուն ու ապագայ խոտացողներուն ալ քաջալեր մը տուած ըլլալու նպատակով կը հրատարակենք նստութեամբ հետեւեալ նամակը, զոր մեզ զրկած է Փարիզէն, Բանասիրի հա- մակրելի Խմբագիր-Տնօրէնը Մեծ. Տիար Կ. Յ. Բաճումջեան :

Պարիս, 8 օգոստ. 1900

Ազնիւ Պաշտօնակից, Կարգալով «Նոր Օր» Պատ. թերթից 24(7) Յուլիսի թուին մէջ թէ՛ Ազգ. վարժարանի աշակերտներէն Օր. Հայկանոյ Տ. Անդրէասեան մեծ սէր ցոյց տուած է ազգային պատմութեան ուսման, որուն ապացոյց է իր այնքան գեղեցիկ դրուող քննութիւնն զոր հրատա- րակած է «Նոր Օր», կը փութամ ծանուցանել թէ՛ «Բանասէր» հանդիպէս Բ. ստորուան ամբողջ թիւերը նուիրած եմ և Ձեր Պատ. խմբագրութեան միջոցա-

պիտի զրկեմ յիշեալ Օրիորդին, քաջալերելու համար Ազգ. Պատմութեամբ զբաղող նորահաս սերունդն :  
Ձերդ յարգանք  
Կ. Յ. ԲԱՃՈՄՋԵԱՆ

Տեղն է հօս չեղեկու Ազգ. վարժարանի ժրջան ուսուցչուհի համեստ Օր. Սօֆի Մախլանի գնահա- տելի և արդիւնաշատ պաշտօնավարութիւնն, որով յաջողած է Ազգ. ընծայել յիշեալ օրիորդին պէս ընտիր Հայուհիներ :

Պատ. վարչութիւն  
«Նոր-Օր» լրագրի  
Ի Գահիրէ

Կը խնդրենք որ բարեհաճեք հետեւեալը զետեղել Ձեր . . . թերթին մօտակայ թիւին մէջ և ընդունիլ խոր- հուրդիս ջերմ շնորհակալութիւնը :

Օմտուրմանի Պատուարժան ազգայիններն, այդ հե- աւոր կեդրոնին մէջ իսկ հաւատարիմ մնալով ազգու- թեան և հայրենիքի գաղափարին, ինքնաբերաբար հան- զանակութիւն մը կատարած են իրենց մէջ և արդիւն- քը (22) քառանկու եզ. ոսկի Մեծ. նազարէթ էֆ. Բիւրքեսեանի միջոցա Առաջնորդարան զրկած են, բաժ- նուելու համար աստ հաստատուած որբանամ մարմնե- ներու :

Այդ գուժարէն, յիշեալ Պատ. ազգայնաց ընկերու- թեան յատկացուցած վեց մը. ոսկին . այս անգամ ստա- ցած է խորհուրդս շեմ շնորհակալութեամբ :

Նոյնպէս շնորհակալութեամբ ստացուած է 77 զըշ. ողջի գուժարէն, զոր Մեծ. Գահիրի էֆ. Սիրունեան բա- րեհաճած է նուիրել ընկերութեանս, աթիւ իր նշանա- խոտութեանն ազն. Օրիորդ Արտէմիս Թուճայեանի հետ :

Ի դիմաց Տնօրէն խորհրդոյ  
Որբերու Հոգատար ընկերութեան  
Ատենազպիր Ատենապետ  
Մ. Ս. ԲՐՈՒՏԵԱՆ Ն. Մ. ԱՂԱԶԱՐՍ

Տնօրէն խորհուրդս պատու ունի ՚ի գիտութիւն ազ- նիւ ընկերաց յայտարարելու թէ, Պ. Միմաս Մարգարեան և Կարգալով Պատ. Զ. Բրաքուրէն ընկերութեան հաւաքիչ կարգուած է ընկերութեանս :

Ի դիմաց Տնօրէն խորհրդոյ  
Որբերու Հոգատար ընկերութեան  
Ատենազպիր Ատենապետ  
Մ. Ս. ԲՐՈՒՏԵԱՆ Ն. Մ. ԱՂԱԶԱՐՍ

### Լ. Բ. Ա. Ք. Ա. Ղ

«Լ. Արմէնի» մէջ կը կարգանք . Կ. Պոլսոյ ուստիկանութիւնը բանտարկեց 150 հայեր, պատրուակելով թէ՛ 2 յեղափոխականներ, Կարապետ Տօրամաճեան և Ջարէհ Գօշեան Կ. Պոլսի եկած են խոստովութիւններ հանելու, հինգ Կ. Պոլսեցի Հայեր Ափ- բիկեան Տրիպոլիս արքայութեան և, իսկ 40 Թոտոթօցի- ներ տեղերին ևս զրկուած են :

Սերբի կամաւորներէն մէկը, Անգրանիկ, ապստամ- բութեան դրօշը պարգած է Մուշի մէջ . իր հրամանին ներքե և 60 մարտիկներ :

— Բարլիկ Հայ գաղթականութիւնը Հոգաբարձու- թիւն մը կազմած է, որ մտադիր է զբաղելու Հայկա- կան մատուռ մը շինելու փութոյ պնդութեամբ :

— Գուժարու Պարիսը քարանձ 25 օսմ. ոսկի զրկած է Տիգրանակեան, Հայ բանտարկեաներուն բաշ- խուելու համար : Խալիս պէյ չէ՛ արածուած այս նպա- տին բաշխուել, առարկելով թէ՛ բանտերու կանգնաբրին տրամագրութեան համեմատ արգիւտած է բանտարկե- լոց 25 զըշ. ե աւելի զրամ կրել իրենց զբայանք :

— Կալկաթայի Արգար գերգատաստը, հոշակաւոր իր բարեգործութիւններով, տեղային իշխանութեանց յանձ- նած է 65000 ֆրանքի գումար մը, որուն տոկոսներով պիտի ապրուին Կալկաթայի և Զոյլայի կարօտեալ Հայերը :

— Տիպիւն Թագուր բաշա Յակոբեան և որդին Լե- ւան պէյ՝ Իզմիրի Առաջնորդին ծանուցած են թէ՛ ողբա- ցեալ թաղւոր բաշան 458,270 զըշ. գումար մը կու- կած է Իզմիրի մէջ Հայ օրիորդաց վարժարանի մը հիմ- նարկութեան համար : Այս նուէրը, Աղեքանազրիյ զբա- մատուտը զրուած, բարձրացած է հիմայ 7,540 անդլ. ոսկեոյ : Ամեն. Մուրատեանց Սրբազան փութացած է զրկել շնորհակալեաց և օրհնութեան զրմ մը յիշեալ աղնուական ու վեհանձն Հայուհեոյն ու իր մեծանունը

որդուք, որոնք մտադիր են անմիջապէս բանալու վարժարանը, եթէ այդ գործարք բաւէ պահելու...

—Պ. տը Բայլէյ, կլմտական նախարար, Հուկպարական պատուիրակութեան յայտարարած է թէ՛ Մաս-

Երբ Հայ մը համարձակի համանման իդձեր տածել էր հայրենիքին, Թուրքերը մասնի՛չ կը պոտան երեսին...

ՊԱՐՄԻՅ ԵԱՆԻՆ ՀԱՅՐԸ. — Շահին սպաննութեան փորձին առթիւ «Ճար տ'Ալէքսանդրի» մէջ կը բերէ եզ-

Յորեկանին տնտեսութեան 5 օր առաջ, մինչ-դեռ բովանդակ ազգը կը պատրաստուէր մեծ տօներուն...

1896 Մայիս 1ի առաւօտուն, Պարսից Շահը, իր նախարարակներն հետ Շահ Ապուլը Ազիւսի մզկիթը գնաց աղօթքի :

Կառքն ի՛յձ առնել, Շահը քանի մը սիրալիր խօսքեր ուզելից ժողովրդի մարդը, որոնք իր անցքին վրայ խնամ էին :

Երբոր հասաւ սրբալայրին մուտքը ձգուած կրկին շղթաներուն առջև, հոջիկները հանեց ու ներս մտաւ :

Հազիւ թէ սկսած էր աղօթքի, և. ահա՛ չըջահարի հարուած մը թնդաց ու ինք կռնակին վրայ ընկաւ :

Նախարարակները զինք վերցուց, իր բազուկներուն վրայ առաւ. ու տարաւ կառքը զրաւ : Բայց արդէն Շահը հողեւարքի մէջ էր : Ոճրէն է ժամ յետոյ արձակեց իր վերջին շունչը :

ԽՏԻՎԸ. — Ն. Բ. Խտիվը Վիեննայէն երէկ իրիկուն կամ այսօր պիտի մեկնած ըլլայ Պոտոպէշք երթալու համար, ուր Նորին Բարձրութիւնը մէկ շաբաթ պիտի մնայ :

Ըստ «Տիր Ինֆորմատիօն» Վիեննական թերթին, Բարձր Խտիվը Կ. Պոլսոյ ճամբով Եգիպտոս վերադառնալու գրաստութեանէն հրաժարած է : Նորին Բարձրութիւնը պիտի վերադառնայ Վիեննայ, Ալբանիոյ ու Սելանիկի ճամբով :

Միեւնոյն թերթը կ'ըսէ թէ՛ Խտիվը Ալբանիա ճամբորդելով նպատակ ունի այցելելու հարիւրամաս Ալբանիացի մը որ Մուհամմէտ Ալիի և Իպրահիմ բայալի օրով ծառայած է եգիպտական բանակին մէջ. կ'երևի թէ այս վաղեմի զօրականը, իր խոր ծերութեան պատճառաւ ստիպուած էր չ'ընդունելու Ն. Բ. Խտիվին այցելութեան համար Եգիպտոս պալու հրաւերը, որ եղած էր իրեն :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏԱՆԵԿՈՒԹԵԱՆ ՅՈՒԾԵՐ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

—Վրոյր՛, ըսաւ խորհրդաւոր ձայնով մը, կը գովեմ եռանդը, բայց այժմ չեմ քաջակերբ... զէնքը, այո՛ ստորակ ժողովրդի մը միակ յոյան ու խարիսխն է, բայց մի և ոչ ժամանակ կրնայ բնայնման վարակիչ միքրոպ այ նկատուիլ, եթէ զայն չ'գիտնայ գործածել ըստ արժանոցն, պատեն առթիւ, եւ կամ գէթ անձնապաշտպանութեան համար... այժմ որ Թուրքը զօրացած է կերպական անհամաձայնութենէն, որով անարգել կարող է շարունակել իւր անխիղճ ծրագրերը — անընդհատ ճնշումներ ու պարբերական կոտորածներ, — մեզ Հայոցս մէկ միջոց միայն կը մնայ. ջանալ միշտ խուսափելու անոր վատ տրամադրութիւններէն. մինք այժմ աւելի պարտինք անձնապաշտպանութեան զիմալ, աւելի խոնկում ու գիտակից գտնուիլ, քան թէ անհատական, անը գիտակից ու անտանալ կարծումներով փոխանակ առաջին առնելու աւելի առիթ ընծայել թրքին՝ դիւրացնելով նորա կորստաբեր քաղաքականութեան իրադրուածքը... մեր զէնքը՛ մեր մտաւորական ու բարոյա-

ՅՈՒԱՏ ԻՇԽԱՆԸ. — Հոսի Ումպէրթօ թագաւորին թագման հանդիսին ներկայ գտնուող օտար պատուիրակներուն մէջ տեսնուած է Բարձր. իշխան Յուսաբաշան, Խտիվին հօրեղբայրը որ երկու ամսէ ի վեր Իտալիա կը գտնուի :

Հ Ե Ռ Ա Պ Ի Ր Ն Ե Ր

ԵԱՆԿ-ՀԱՅ 11 Օգոստ. — Փոխարքաները, հետերնին ունենալով Լի-Հունի-Չանկը, Միացեալ-Նահանգներուն զիմեցին ինդըրլով որ արգիլեն օտարներուն Շահի-Հայ զօրագնդեր հանկը :

ՊԵՐԼԻՆ 11 Օգոստ. — Գերմանք, Ա.ստորագրեք և Իտալացիք Դիէն-Ձին վերադարձան Բէյճանիկ կուէն վերջ :

ՀՈՌՄ 12 Օգոստ. — Ումպէրթօ թագաւորին ըսպաննու մը՛ ընկերութեան բոլոր զասակարգերուն հաւատարմութիւնն ամրապնդեց : Վիզթոր Էմմանուէլ Գ. թագաւորը երէկ Խորհրդարանին ներկայութեան, Սահմանադրութեան հաւատարմութեան երզումն ըրաւ խանդավառ գոռում գոչումներու մէջ :

ԼՈՆՏՐՈՆ 13 Օգոստ. — Լորտ Սալզպըրի Վոսկեաններուն մէջ գնաց ամբի մ'անցնելու Շուաք, ուսիկց պիտի վարէ գործերը :

Նախագահ Բրուկէր Պարպէրթըն գնաց ուր պիտի հաստատէ, կ'ըսեն, կտաւարական կեդրոնը Ռուսիան կը շարունակէ շարժման մէջ նեյ զահազին ստուար գնդեր Եսալաքոյն-Արեւելքի համար :

ՈՒԱՇԻՆԿԻՐՆ 13 Օգոստ. — Միացեալ-Նահանգաց կտաւարութիւնն աղղու կերպով մերժեց որեւէ բանակցութիւն բանալ հաշտութեան մասին մինչեւ որ Ջինաստան գոհացում չտայ իր պահանջներուն. այս եղաւ պատասխանը կասիւրական հրովարտակին որ պաշտօնագետ հաղորդուած էր Միացեալ-Նահ. կտաւարութեան, և որով պաշտօն արուած էր Լի-Հունի-Չանիկի հաշտութեան բանակցութիւնները կատարելու :

ԱՐՔԱՅԱՊԱՆ ՅԻՄԱՐՈՒԹԻՒՆՆԸ

Ահաւասիկ թարգմանութիւնը «Ֆիկարօսի վերջեր» հրատարակած յօդուածին, զոր տեղւոյս «Բրօկրէ» օրաթերթին ալ արտագրած էր : Այդ չահական յօդուածը կը կրէ հետեւեալ խօրագիրը, «Նախաստեամտ ու գոաշարուած սպաննում» :

Լօսկարոց ճիշդ բարբ գործածած է Լալախական յիմարութեան եղանակն անուանելով 1793 թուականը, որուն յաջորդող զարուս առաջին շրջանին՝ թիչ Իտալացիներ կը գտնուին քաղաքական մարդասպաններուն շարքին մէջ : 1815ի յեղաշրջումին, ընդհակառակ՛, Իտալիան սղաւտական հաստատուն բաղձանքներով յուզուած, ու ոտք կը լծ լարապետութեանց ու արարներուն ուժգնու-

կան բարձրացումը պէտք է ըլլայ, մինչև որ գիտակցութեան, ու անոր հետեւանքով գաղափարաց ներդաշնակութեան, համերայնութեան և ուղղամտութեան կապովը չը միանան, մեզ անկարելի է նոյն իսկ անձնապաշտպանութեան զիմելը... զէնքը միշտ կայ ու կայ, բայց զայն ի պահանջել հարկին ու գիտակցօրէն գործածող ձեռքեր կը պակսին... :

Եւ իրօք, բարեբարիս այս յայտնութենէն մի քանի օր վերջ ամթանար՛ նորա ձեռքը կը համբուրէի, երախտագիտութիւնս չկարենալով լեզուով յայտնել, երախտութք մը, որուն իմ կեանքս կը պարտէի. Պապ-Ալիի ցոյցին առթիւ, թէ և. զինուած էի, բայց եւ այնպէս նոքա գիտակից ձեռքերով կեանքս կարողացած էի վերստին վայելել :

Այս յիշատակներով սիրտս խորպայս խոցուած՝ կըքած ուսերով, ու զոգոջուն քայլերով անգիտակցօրէն ուղղուեցայ Թօփ-Հանէի կողմը, ուր առաջին առթիւ հանըղիլող գաւառացի ծանօթ է մը իմացայ թէ՛ բարեբարս բանտին մէջ մտած էր, չ'տակալով այն անխիղճ տանջանքներուն, զորս իրեն տուած էին իրմէ գաղտնիքներ կորզելու նպատակաւ... :

Երեք օր վերջ ձկնորաները, Մ... գիւղի ծովափին ամայի եւ անմարդաձայն մէկ խորշը նշմարած էին նորա կրտսերին անձնաշէլի զիակը... :

Թեև կուրու վրայ կրտուած անունէն ու Ս. Գլխադրի պատկերէն ստուգելով թէ Հայ մ'է, —միևնոյն ժա-

թիւնը, կուգայ երեւան : Այն ատենէն զաշոյրը կ'սկսի կարեւոր գեր մը խաղալ : Այն ատենէն արդէն փոքրիկ վիճակական Լ. Բրուկէրները, աւելի կամ քիչ, Վիեննայի իննամակալութեան տակ պահպանուած, կ'ստիպուին ձեռք առնել լուրջ միջոցներ սպաննութեան փորձերուն դմ :

Ու չուտով կրկին դրսերն ալ կ'երևին իտալական արքայասպան վարդապետութիւնները, գործով Լառնոքի Երան վարդապետութիւնը՝ կը ծաւալի Ֆրանսա, այսինքն այն երկրին մէջ, որ 1804ին տեսած էր զօտոսային մերկեան :

1835ին, Ֆիէսքին է որ Յուլիոս 28ին Լաւ-Ֆիլիքի կեանքը վերջնելու փորձը կ'ընէ : 1858ին, Օրսինի'ն է որ Յուն վար 14ին կը փորձէ օղը հանել Նաբօլէոն Գ. ու կայսրունէին : Եւ ասոնց պէս իրենց մեղապարհներն ու գործակիցներն ալ գրեթէ միշտ իտալացի եղած են ծագումով :

Տարիները կ'անցնին : Արքայասպան յիմարութիւնը աւելի կամ քիչ կը խմորի : Ոստիկանութեան տեղեկագիրներ, Միլանի արձանագրութեանց մէջ պահուած, կը հաստատեն թէ 1845ին ու 1855ին ձերբակալուած են շատ մ'իտալացիներ, որոնք ամենքն ալ յայտնած են արքայասպան խորհուրդներ Թօքսանայի, Ներիու Սիկիլիանց, Ա.ստորիոյ Վեհապետներուն գէմ :

Յետոյ կուգան 1870էն ի վեր, Գարօբայէ, Բասսանանդէ, Բիէնէ Մարիէզզի, Անճիօլիլլօ, Գաւէրիօ, Լուքիէնի, Աչչարիցօ, Սիբիաիօ և. երէկուան մարդասպանը կ'աչտանօ Պրեւիլլի... :

Ինչպէս որ կը տեսնենք, Իտալացիները կը գործեն ամենուրեք. Ֆրանսա, Ղուկէզերա, Պէլճիքա, Թէեւ Նախասպանութեամբ կ'ընտրեն Լատին երկրները : Ռուսիա չ'շահագրգռեց զիրենք, Գերմանիոյ մասին անտարբեր են :

Եւ սակայն այս երկու վերջին երկիրներն ալ ունին իրենց արքայասպանները, իրենց դաւաճիները : Կիլիսիո Ա.ի Գերմանիան չ'ունեցա՞ւ Հետէլ ու Նոպիլինիկ Նոպիլինիկ այժման Համալսարանին բժիշկը, մտաւորական բարձր գասակարգին պատկանող արքայասպան մը :

Իսկ, Իտալացի արքայասպանը, ինչպէս նաեւ իր միւս ազգակից սպանիացի արքայասպանը, օստիկէ՛ն ալ, գործաւոր դասագրգռէ՛ն ալ, առ հասարակ ամեն արհեստներու կը ծառայեն : Նաւակայրի գործաւորներ, ատաղձագործներ, հողկիր մշակներ ու որմնագիրներ, աւելի մասնաւոր կերպով տոգորուած կը թուին անխոխանական գաղափարներով : Ասի արգիլք մը չէ սակայն որ Բասսանանդէ, պարզ խոհարար մը, 1879ին Նոյեմբ. 17ին Ումպէրթօյի կեանքին գէմ դաւադրած ըլլայ :

Իրօք միջազգային համաժողովը (Congrès) 1881ի Յուլիոսի, Նոպիլինիկի (1878) և Բասսանանդէի (1879) սպաննութեան փորձերէն յետոյ, հոչակեց «Խորձքով Բարդոթութիւնը» միակ գլխաւոր միջոց նոր գաղափարները տարածելու, ընդունելով որ եկած հասած էր ժամօր համազգային շրջանէն անցնելու գործունէութեան շրջանը : Ու այն ատենէն ի վեր տեսնուեցան Իտալացի անիշխանականները մարտ մղելով ոչ միայն միապետական ձեւին, այլ բոլոր արգի Սահմանադրութեանց գէմ ու սպաննեցին ֆրանսական Հանրապետութեան նախագիրը (1894 Յունիս 24), սպաննեցին Ա.ստորիոյ կայսրունէին 1898 Մեպտ. 12) և փորձեցին մահացնել Անգլիոյ թագաժառանգը (1899 Դեկտեմբերին) :

մանակ վախճալով կասկած հրաւիրելու վրանին — լուկեայն թաղած էին դայն ծովափէն քիչ մը հեռուն... : Հետեւեալ օրն իսկ, նոքա անգաղափարաց մէկ ընկերէն պատանմամբ իմացայ եղելութիւնը. ուստի փութացի միևնորուն քով, որոնց տուած տեղեկութիւններէն ստուգելով թէ նոյն ինքն՛ բարեբարս էր ծովափը թաղուած եղկիլին ու չ'կարենալով զստիլ արտասուքս, յուզուած շեշտով մը պատմեցի անոնց թէ՛ ո՛վ էր այն յիշատակելի անձը... :

Ձկնորաները անխօսուկ ունկնդրեցին զիս... բայց երբ խօսքերս հեծկտուքներուս մէջ խեղդուելով այլ եւս անբարենիք զարձան, այդ կոշտ ճանչցուած մարդկր՛ թրջած աչքերով, կոտորած բարեբարով, հառաչանքով ոտքի կ'ան, իրենց ջլապիկը բազուկներով անազին քար մը վերջնելով ծովափէն, բերին ձկնեցին հողակայան վրայ, սիրութեամբ մրմնջելով,

—Աստու՞ած լուսաւորէ նոյն... : Այն եղաւ բարեբարիս անշուք չերիմը... :

Այդ տգէտ ու կոպիտ մարդիկ գոնէ պիտոցան յարգել արժանիքը հանրային այն անկեղծ ու վիճանձ գործիչին, որուն ողջութեանը գլխուն տեղացիին լուսաւոր կարկուտներ, և որուն հողիկն բարձրութիւնը նուստատացնել ու սրտին ազնուութիւնը նստացնել փորձեցին յայտնանքութեան կարգ մը Ջոյլիսուէր, որոնց լեզուները վարժուած են խայթելու, եւ ժանիքները՛ խածներու, ինչո՞ւ... :

ՎՐՈՑՐ

«ՆՈՒՍԻՆԵԱՆՔ»

ԳՐԵՑ ՄԵԼԻՔ Ս. ԴԱԽԻԹ ԲԵԿ

460 էջ, տպարան Վիեննայի Մխիթարեանց 1900. գինն է 2 ձր.

Կը ծախուի հետեւեալ պայմաններով՝ Չորս հարիւր օրինակ Արարկիրի Որբանոցին համար. երեք հարիւր օրինակ Կիպրոսի Որբանոցին համար. իսկ մնացած 300 օրինակը հեղինակին համար:

Հեղինակը այդ 300 օրինակները կը պահէ իւր ծախքին հանելու և բարեկամներու նուիրելու համար. իսկ միւս օրինակները բոլորովին անձեռնմխելի են և հեղինակը նուիրած է հայ յիշեալ երկու որբանոցներուն:

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՆԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ

Ի նպատակ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ «Բազմավէպ» բացատրիկ պրակ մը կը հրատարակէ Թերթին երկայնու- թիւնն է 42 հարիւրորդամէթը, լայնք 30 հարմ.: Թերթը կը բաղկանայ 40 էջերէ, եւ ամէն էջ երեք լայն պիւնակներու բաժնուած է: Թերթը հաստ, ոգորկ, փայլուն ու շատ ընտիր: Կը պարունակէ ժողովրդեան ուշագրաւ հետաքրքրական եւ օգտակար յօդուածներ: «Բազմավէպ» այս բացատրիկ լայնածաւալ մեծ թերթը կը հրատարակուի իբրև անդրանիկ «Հայ պատկերազարդ թերթ» մը Illustration Arménienne, նման Եւրոպական մեծ ազգայն շարժական պատկերազարդ թերթներուն:

Կը տպուի մի քանի հազար եւ ստակը պիտի յատկացուի հայ որբանոցներու:

Գինն է ԿԱՆԻՍԻԿ 2,50 ֆր. կամ 1 րբ. 50 օէնթ: Այս ծանուցազրով կը հրաւիրենք մերազնեայ այն մասն ազնիւ ու զիժած անձնաւորութիւնները որ բաժանորդագրուելով այս բացատրիկ պրակին, համեստ լուծայ մը բարեհաճին ձեռնու հայ որբիկներու գանձանակին մէջ:

Բաժանորդագրաց անունն, եւ ով որ այս նպատակաւ որբիկներուն օգնութեան պիտի հասնի, հաւաքուած գումարը եւ որչափ պիտի յատկացուի իւրաքանչիւր որբանոցներուն, պիտի սպուին «Բազմավէպ» պրակի- թուն մէջ:

Այս բացատրիկ թերթին մէջ կը տպուին նաեւ ծանուցումներ, մէկ տողի գինն է 25 անդրիմ, փոխազդէ փութան յղել իրենց ծանուցումները:

Մեր հասցէն է՝ Rédaction de la Revue «PAZMAVB» (St. Lazar) VENISE (ITALIE)

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

ՏԻԳՐԱՆ Ն. Թ. ՍԱՒԱԼԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՅՈՒՇԵՐ

Ս. Դարբինեան տպարանէն մաքուր տպագրութեամբ և հեղինակին վիճակի պատկերով զարդարուած՝ ի լոյս ելնելու մօտ է հարիւրէ աւելի էջերէ բաղկացեալ սոյն կենսագրական երկն որ իւր շահեկան պարունակութեամբ արժանի է ամեն կարգի ազգայնոց ընթերցման: Ինքնակենսագիրն, Ձմիւռնոյ Նին ծանօթ դրական դէմքերէն մին, իր Երուսաղէմ, Աղեքսանդրիա, Իզմիր եւ Էստէմիլ վարած ուսուցչական եւ այլ կարեւոր պաշտօններու քերտմք՝ ազգային եւ օտարազգի եկեղեցական եւ աշխարհական նշանաւոր անձնաւորութեանց հետ ունեցած է զբաւուր եւ մտերմական յարաբերութիւններ, զորս զիրոյցած է ճարտար եղանակաւ մը խոսնել իր կենսագրական յուշերուն, այնպէս որ ամբողջ գործն մէկ շունչով կարելի է կարդալ անձան- ըրոյթ եւ լարուած հետաքրքրութեամբ:

Որովհետեւ սակաւաթիւ օրինակներ միայն տպուած են սոյն կենսագրական երկէ, փոխազդէ կրնան այժմէն ընդ իրենց յանձնարարութիւնն՝ զմեկուով

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆԻ ՏՊԱՐԱՆԸ

Ի Պագար Մուրուր Թիւ 27

Գին 5 ԴԱԶ. ՈՂՁ

Le gérant, J. MUNIER.

ԿՈՒԶԷ՛Ք ՈՒՆԵՆԱԼ ՈՍՍԱԿԻ

ԿՈՒՅԷՆ ԼԱՐԻՈՂ, ԽԻՍՏ ՍԻՐՈՒՆ ԵՒ ԸՆՏԻՐ

ԺՍՄԱՑՈՑՑ ՍԸ

ՄԻՄԻԱԿՆ 120 ՂՐԸ. ՎՃԱՐԵԼՈՎ.

ԴԻՄԵՑԷ՛Ք

ՍԵԼՎԱՋԵԱՆ ՎԱՋԱՌԱՏՈՒՆԸ

ԳԱՀԻՐԷ ՄՈՒՍՔԻ ՓՈՂՈՑ

Ուր կրնաք գտնել նաեւ ՈՍԿԻ ամեն տեսակ ժամացոյցներու ամենաղիւստամտելի գներէն սկսելով մինչեւ ազամաղաղարդ: Արծաթ ժամացոյցներ 50 դրուէն սկսեալ, նիքէլ որմօնթուա ժամացոյցներ 22 դրուէն սկսեալ. նաեւ Ոսկի, արծաթ եւ ոսկեպատ շրջ- թաներ եւ զոհարեղէններ, ինչպէս նաեւ պատի եւ ջօնսօլի բազմազան բանախմբեր:

Ամերիկեան նիքէլ ժամացոյցներ, գրասեղանի յատուկ, 10 Ղրուչի անհաւատալի գնոյ փոխարէն, որոնք լաւ կ'ընեն:

Ուրեմն զիմեզէ՛ք ուղղակի:

ՍԵԼՎԱՋԵԱՆ ՎԱՋԱՌԱՏՈՒՆԸ

ՊԵԼԱՆԵԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՉԱԿՆԵՐ

Տիկնաց եւ առանց

ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապրիլի մեծ պողոտային վրայ, Տալիսայի Մանիլի զիմացը, հարկին երկնազան գործիներու վանաւանդը:

Վերջերս Ամերիկայէն հոս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեկ զիմեզ Պատ. յաճախորդները, գործի մաքրութեան, գիներու չափաւորութեան և ճշգրտակարգութեան կողմէն:

Մեր գործատեղւոյն մէջ կ'աւանդուին նաեւ ձեռագիրութեան գատեր ամերիկեան ամենալեր- ջին կատարելագործուած մէթոտով:

Մանրամասնութեանց համար դիմել մեր գործատեղին:

ԱՏԱՄԱՐՈՅԹ Պ. ՆԻԿՈՂԻՄՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահրիէ, Գաֆէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 գատիկոնը: Կը բժշկէ բերնի և ակուայի ամեն տեսակ հիւանդութիւնները: Աղքատները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

ՁՈՒԼԻՉ - ՄԵՔԵՆԱԳՈՐԾ

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԲԱՐՔ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆԻ ՆԱԿԿԻՆ ՏՊԱՐԱՆԸ

Շարա Մուհամմեթ Ալի, Հապպաքի

Կը ձուլեն, կը չինեն երկաթէ ու արդրէ զանազան գործիներ ոսկեղնութեան և ուրիշ նուրբ արհեստներու վերաբերեալ, ծորակ, ելն, Թաճախորդները զօհացունող պայմաններով:

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 12 ՕԴՈՍՏՈՍ 1900

778	7096	4885	4802	4618	43
516	894	1505	1508	1993	2884
4106	4075	4454	4237	5280	5130
5683	5794	6264	6254	6717	7638
		8304	8491	9090	

Տպագ ուքիւն Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ - Պագար Մուրուր

Գալով Ոււզբէթ թագաւորին, որ ընկաւ Կաէզա- նօ Պրէսչի կրեք գնդակներուն տակ, կրնանք ըսել թէ՛ հրկար ատենէ ի վեր սահմանուած զո՛ւ մըն էր ան- թէ՛ իտալական ոստիկանութիւնը՝ Յրանալէն ու Ջուր- ցիքիայէն կ'ստանար ազգարարութիւններ՝ ծանուցանող թէ՛ այս կամ այն ընկերը, անիշխանական գումարումի մը մէջ յայտարարած էր ուզել սպաննել վեհապետը:

«Այս կամ այն ընկերը», ինչ կ'ըսեմ:

Լուքէնի, երբ կը հարցուէր իրեն թէ ինչ պատ- ճառներէ թեկադրուած էր սպաննելու կին մը, չը յայտարարեց ժընէվի Ընդհ. դատախաչին ու հարցաքննիչ զատուորին թէ «Ինք ուզած էր նախապէս սպաննել Ոււզբէթ թագաւորը»: Պաղ անտարբերութեամբ մը — ու իր խօսքերը բերնէն կ'իջնային կիթօֆին կտրոցին պէս — չ'աւելցո՛ւց, «Ինչ որ ես չկրցի ընել, ուրիշ մը պիտի ընէ»: Ռօսերը, զժընէվի մարզարէական, զոր պէտքը չէր որ անտեսէր իտալական ոստիկանութիւնը, աւելի քան երբէք բարուք պահպանութեամբ մը հակելով վե- հապետին շուրջը:

Վանդի, ան՝ 10 տարիէ աւելի է որ Ոււզբէթ թագաւորին կեանքին հետ կը խաղացուէր. ան՝ 10 տարիէ աւելի է որ իտալացի անիշխանականները կ'ուս- տէին սպաննել «Բեռնական»ը. ան՝ 10 տարիէ աւելի է որ եւրոպական բոլոր ոստիկանութիւնները կ'զգուշաց- նէին իտալական կառավարութիւնը:

Եւ եթէ հիմայ հարցուի թէ՛ ինչո՞ւ համար քաղա- քական օճիկ այս դպրոցը կը ծաղկի իտալացիներուն մէջ, եթէ հարցուի թէ ինչո՞ւ համար անիտրարար կը սպաննեն անոնք Հանրապետութեան նախագահ մը, կ'ստորուի մը, Թագաւոր մը, երկու պատասխան կարելի է տալ:

Նախ՝ վրէժխնդրութեան ու բնութեան աւան- դութիւնը, օովորութիւնները, որոնք դարերով արմա- տացած են իտալիայ քանի մը գաւառներուն մէջ:

Երկրորդ՝ բոլորովին մասնաւոր հակու՛մ մը դէպ ի քաղաքական միտքի քաղաքականութիւն, միտքի քաղաքա- ականացած ու մարտիրոսանալու. բաղձանք, վերջական, իխտօ զգալի դարգացում մը սոյն երեք յօտ խորհրդա- տուններուն, հպարտութիւն, անպարծութիւն ու փառքի սենյանք:

Ու այս ամենը փորձած է տարածել Տօլմ. Էմմա- նուէլ Բէնի ու իր հոգեբուժական ուսումնասիրու- թիւնը՝ «Արքայապալանութիւնը պատմութեան ու ներ- կային մէջ» գիրք մը, աւելի ճիշդը, վարդապետական մը, որուն ընթերցումը շահեկանութիւնէ զուրկ չէ՛:

Ասկից դատ —ինչ որ հարցին միւս կողմէն է— տա- ուպանքի, թշուառութեան վիճակն է, Իտալիոյ յատուկ, ու այս մասին լաւ է յիշել ու որոճել ինչ որ կը զրէր զուրիցեակալ Գալիլէոյ Բիլիօն Ընդհ. դատախաչը, Ջուրջիերիոյ մէջ անիշխանական դիտումներուն վրայ տուած սեղեկագրին մէջ (1885 Յունիս):

«Անիշխանականութեան յաղթելու ամենէն ազգու- միջոցն է, կարելի եղածին չափ ընդարձակ կերպով գո- հացում տալ բանւոր դասակարգին այն պահանջներուն որոնք արդարութեան ստամարին մէջ անցած են:

Անիշխանականութիւնը զիպուածին սոսկ արցիւն- քը չէ՛, անոր ծնունդ տուող ու զայն պահպանող պատ- ճառն այն է որ մարդիկներու ստուար խումբեր կը տա- ուպին կարօտութեան մէջ ու աղօտ յոյսի նշուղիկ մ'ալ չուենին յաղթական դուրս ելնելու գոյութեան պայ- քարին մէջէն, ոչ ալ կրնան իրենց աշխատանքով մի- այն վերջ տալու փառք կացութեան, որուն մէջ բոյսի կեանքը կ'ապրին:

Ու Լուքէնիի փաստաբանը Պ. Բիէն Մօրիօ ժընէվի զատարաններուն ատջեւ, 1898 ին աւելի մեկին ու բա- ցայայտ էր:

«Ասի Լուքէնիի դատը չէ՛, դա՛նն է ասի ընկերա- յին վիճակի մը, նոյնիսկ Իտալիոյ դա՛նն է որ հօս պէտք էր սեննել:

Թող ան կրթէ՛ նախ, թող պաշտպանէ իր զաւակ- ները և Աստուած տայ որ չ'իրագործուի օր մը. ինչ որ հօս մեղի խոտովանեցաւ Լուքէնի: Աստուած խնայէ Իտալիոյ որ իր ազգային վեհապետն ալ չ'ընկնի Իտա- ւացիէ մը գաղտնիքն տակ:

1900 Յուլիս 29 ին, Կաէզանօ Պրէսչի կատարեց ինչ որ կ'իմացընէր Լուքէնի և ինչ որ երկիւղ կ'ազդէր ժը- նէվցի փաստաբանին:

ԺՈՂՆ ԿՐԱՆ-ԳԱՐԳԻՐԷ

ՆԱՍԱԿԱՏՈՒՓ

ԲԱՐԻՁ, Տիար Կ. Յ. Բաստ. — Ենթոհակալութեամբ ստացանք Ձեր նուիրած մրցանակը և յանձնեցինք: Պատիւ անոր Համեստ. Ուսուցչուհիին:

ԳԱՀԻՐԷ. — Պ. Յ. Ա. Ձեր ֆրանսերէնէն բան մը չը հասկցանք. հասկնալի ըլլալու համար հայերէն գրեցէ՛ք ուղղակի «Նոր Օր» ի վարչութեան ու պարզեցէ՛ք թէ «Նոր Օր» ի թիւ Չևով ինչ ըսել ուզած էք: Կրնաք զիմել Արտօնատիկով կամ Ռաբարապետին: